# ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ #47

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
NEW GENERATION

## ՆՈՅԵՄԲԵՐ 2021

## ԱՄՍԱԳԻՐ ՆՈՅԵՄԲԵՐ

Հայաստան, Երևան +374 60378989 +374 60478989

**Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:**

### ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ LIFE-18 ԱՐՏԱԳՆԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԸ

2021 թվականի հոկտեմբերի 28-29-ը տեղի ունեցավ «Կարողությունների զարգացում և հզորացում հանուն Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության» ծրագրի շրջանակներում իրականացվող ԼԱՅՖ-18 արտագնա տեղեկատվական հարթակը, որը այս անգամ նախատեսված էր ԼԳԲՏԻ սկսնակ ակտիվիստների համար:

ԼԱՅՖ-18 արտագնա տեղեկատվական հարթակի նպատակն է ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչների շրջանում բարձրացնել սեռականության, առաջնորդության, ակտիվիզմի և մարդու իրավունքների վերաբերյալ գիտելիքների մակարդակը, նպաստել իրավագիտակցության բարձրացմանը, ծանոթացնել իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմներին:
Բացման խոսքով հանդես եկավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը, ով ներկայացրեց կազմակերպության պատմությունը, գործունեության ոլորտները և առաջնահերթությունները, ինչպես նաև շնորհակալություն հայտնեց մասնակիցներին հետաքրքրվածության և մասնակցության համար:

Տեղեկատվական հարթակի սկզբում մասնակիցները ներկայացան՝ նշելով, թե որ մարզն են ներկայացնում, ինչու են ցանկանում մասնակցել և ինչ են ակնկալում:

Երկրորդ օրը նվիրված էր «Առաջնորդություն և ակտիվիզմ» և «Սեռականություն» թեմաներին:

Դասընթացավար Հմայակ Ավետիսյանը մասնակիցներին ներկայացրեց առաջնորդություն հասկացությունը, առաջնորդության բնութագիրը, առաջնորդի հատկանիշները, ինչպես նաև տեսակները:

Ներկայացվեց նաև ԼԳԲՏ ակտիվիզմի պատմությունը, տարբեր շարժումների նախադեպերը և ակտիվիստների կարևորությունը ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում:

Խոսվեց նաև Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովի աշխատանքների և որոշումների կայացման գործընթացում համայնքների ներգրավվածության կարևորության մասին:

Օրվա երկրորդ հատվածում Հմայակ Ավետիսյանը ներկայացրեց «Սեռականություն» թեման, որի շրջանակներում մասնակիցները խմբային խաղերի, ոչ ֆորմալ կրթական միջավայրի միջոցով ծանոթացան բարդ թեմային, բացահայտեցին սեռականության կոմպոնենտները, սկսեցին մտածել իրենց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության մասին, տարբերեցին մի շարք կարևոր տերմիններ, ինչպիսիք են սեռական վարքագիծը, սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը:

Դասընթացի ավարտին մասնակիցներին շնորհվեցին վկայականներ:

Հանդիպման ընթացքում ՆՍՀԿ իրավաբան Շուշան Խնկոյանը ներկայացրեց «Գենդերային ինքնության իրավական ճանաչման վերաբերյալ» օրենքի նախագիծը, ապա անդրադարձավ օրենքի նախագծի ընդունման հիմնավորումներին: Քննարկման օրակարգում էր նաև ՀՀ Կառավարության համար 2008թ.-ի մարտի 27-ին ընդունված 276-Ն որոշումը ու դրանում փոփոխությունների/լրացումների կատարման հիմնավորումների ներկայացումը:

## REGULAR MEETING OF THE WORKING GROUP

2021 թվականի նոյեմբերի 5-ին տեղի ունեցավ Գենդերային ինքնության իրավական ճանաչման օրենքի նախագծի և հարակից փաստաթղթերի դիտարկման աշխատանքային խմբի հերթական հանդիպումը: Հանդիպմանը մասնակցում էին տրանս* համայնքի հետ աշխատող հասարակական կազմակերպություններ՝ «Նոր Սերունդ», «Տրանս ազգային կոալիցիա», «Ֆիռլես», «Հանուն հզոր ապագայի», «Հավասարություն բոլորի համար», «Հանուն ազատության», «Ծնողներ հանուն հավասարության», «Հավասարություն բոլորի համար», ինչպես նաև տրանս* համայնքի ներկայացուցիներ:

ՆՍՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը ներկայացրեց աշխատանքային խմբի ձևավորման նպատակը և ակնկալվող արդյունքները, ինչպես նաև նշվեցին բոլոր այն կառույցները և շահագրգիռ անձինք, ում տեղեկացվել է ծրագրի, աշխատանքային խմբի ստեղծման մասին և ովքեր են հրավիրվել միանալու խմբի աշխատանքներին:

## ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

2021 թվականի նոյեմբերի 11-12-ը Ծաղկաձորում տեղի ունեցավ իրավաբան ուսանողների կարողությունների զարգացման երկօրյա արտագնա դասընթաց, որը կազմակերպվել էր «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի (ՆՍՀԿ) կողմից իրականացվող «Իրազեկում և հզորացում հանուն հավասարության» ծրագրի շրջանակներում ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի միջոցով:

Դասընթացը նպատակ ուներ զարգացնելու Հայաստանի բուհերում ուսանող իրավաբանների կարողությունները մարդու իրավունքների, խարանի և խտրականության, խոշտանգումների վերաբերյալ:

Բացման խոսքով հանդես եկավ ՆՍՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը, ով ողջունեց մասնակիցներին, շնորհակալություն հայտնեց հետաքրքրվածության և մասնակցության համար՝ կարևորելով իրավաբանների դերը խոցելի խմբերի ներկայացուցիչների իրավունքների պաշտպանության համատեքստում: Սերգեյ Գաբրիելյանը հույս հայտնեց, որ այս դասընթացը կլինի հաջողված համագործակցության սկիզբ ՆՍՀԿ-ի և մասնակից իրավաբանների միջև:

Բացման խոսքից հետո մասնակիցներին ներկայացվեց դասընթացի օրակարգը, մասնակիցների օգնությամբ մշակվեցին կանոններ, որոնց պետք է հետևեն դասընթացի ողջ ընթացքում, ինչպես նաև վեր հանվեցիմ մասնակիցների ակնկալիքները և մտահոգությունները:
Հիմնական մասը մեկնարկեց ՆՍՀԿ իրավաբան, դասընթացավար Շուշան Խնկոյանը, որը ներկայացրեց «Մարդու իրավունքներ հասկացությունը» թեման: Մասնակիցները ծանոթացան մարդու իրավունքների հասկացությանը, մարդու իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմներին, հասարակության խոցելի խմբերի՝ մասնավորապես ԼԳԲՏ անձանց, հետ աշխատանքի առանձնահատկություններին: Հստակ օրինակների և դեպքերի քննարկումների արդյունքում մասնակիցների ամրապնդեցին ստացած գիտելիքները և գործնականում հասկացան, թե ինչպես պետք է պայքարել խարանի և խտրականության դեմ:
Երկրորդ օրը նվիրված էր «ՍԿԳԻ հիմքով

խարան և խտրականություն», «Խոշտանգումներ (Ստամբուլյան արձանագրություն)» թեմային: Մասնակիցները հանգամանորեն ծանոթացան հիմնական հասկացություններին, պետության պարտավորություններին խտրականության դեմ պայքարում, խտրականության տեսակներին, խտրական տերմիններին և դրանց անխտրական համարժեքներին, ներպետական և միջազգային օրենսդրություններին: Դասընթացը անցավ ակտիվ քննարկումների և հարցուպատասխանի մթնոլորտում՝ ներառելով տեսական և գործնական վարժանքներ, աշխատարաններ, թիմային վարժություններ:

OSCE ODIHR
HATE CRIME REPORTING
2020

## ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-Ը 2020թ-ի ՁԵԿՈՒՅՑՈՒՄ ՆԵՐԱՌՎԵԼ Է «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔԵՐԸ

2021թ-ի նոյեմբերի 15-ին Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության (ԵԱՀԿ) ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) հրապարակել է 2020թ-ին տեղի ունեցած ատելության հիմքով հանցագործությունների իր տարեկան զեկույցը:
Այս տարի ևս «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից ներկայացված 7 դեպքերը ներառվել են ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ-ի 2020թ-ի զեկույցում: Դեպքերը ներառում են անձանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության շարժառիթով ատելության հիմքով հանցագործություններ, որոնք արձանագրվել են կազմակերպության կողմից ՀՀ-ում 2020 թ.-ին:

Զեկույցին կարող եք ծանոթանալ այստեղ:

## ՄԻ ԽՈՒՄԲ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԻ ԳՈՐԾՈՎ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ ԿՐԿԻՆ ՀԵՏԱՁԳՎԵՑ

2021թ.-ի նոյեմբերի 3-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Ավան և Նոր Նորքի նստավայրում դատավոր Վարդան Գրիգորյանի նախագահությամբ տեղի ունեցավ Գ.Մ.-ի և Ս.Հ.-ի կողմից Ա.Ա.-ին (փոխված է) ծեծի ենթարկելու գործով դատական նիստը: Գործով 3-րդ դատական նիստն էր, որին կրկին անգամ չէին ներկայացել ամբաստանյալները:

Փաստաբան Արա Ղարագյոզյանը դիրքորոշում արտահայտեց ամբաստանյալներին բերման ենթարկել:
Դատարանի կողմից ամբաստանյալներին բերման ենթարկելու մասին որոշում կայացվեց և դատական նիստը հետաձգվեց:
Հաջորդ դատական նիստը տեղի կունենա 2021թ-ի դեկտեմբերի 29-ին ժամը 10:00-ին:

**Գործի նախապատմությունը:**

2020թ.-ի հուլիսի 15-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ է դիմել ՀՀ քաղաքացի Ա.Ա.-ն: Վերջինս հայտնել է, որ 2020թ.-ի հունիսի 3-ին իր ընկերների հետ գտնվել է Երևան քաղաքի իրենց ամառանոցում: Մի խումբ անձինք հարձակվել են Ա.Ա.-ի տան վրա և հայոյելով պահանջել են հեռանալ՝ կապված Ա.Ա-ի և նրա ընկերների ենթադրյալ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հետ: Սկսվել է վիճաբանություն, որից հետո այդ անձինք հայհոյելով ձեռքերով, ոտքերով և քարերով հարվածներ են հասցրել Ա.Ա.-ի մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ գլխի շրջանում:
Ա.Ա.-ն նույն օրը դեպքի առթիվ հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանություն, որի հիման վրա նախապատրաստված նյութերով 2020թ.-ի հունիսի 29-ին ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնի ավագ հետաքննիչի որոշմամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով և այն ուղարկվել է ՀՀ Քննչական կոմիտեի Շենգավիթի վարչական շրջանի քննչական բաժին՝ նախաքննություն կատարելու համար: ՀՀ Քննչական կոմիտեի Շենգավիթի քննչական բաժնի կողմից 2020թ.-ի հուլիսի 6-ին որոշում է կայացվել քրեական գործը վարույթ ընդունելու մասին:
Գործում ներգրավվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ փաստաբան Արա Ղարագյոզյանը:
Ա.Ա.-ն ճանաչվել է գործով տուժող:

**2021թ-ի ապրիլի 6-ին ավարտվել է գործով նախաքննությունը և այն ուղարկվել դատարան: 2021թ-ի ապրիլի 15-ին ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Վ.Լ.Գրիգորյանը որոշում է կայացրել գործը վարույթ ընդունելու մասին:**

## ՍՆՆԴԻ ՓԱԹԵԹՆԵՐ՝ COVID-19-ԻՑ ՏՈՒԺԱԾ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻՆ

**«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն շարունակում է սննդի փաթեթների տրամադրման հայտերի հավաքագրումը այն SUS (տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդ), ԿՍԿ (կոմերցիոն սեռական ծառայություն մատուցող կանանց) և տրանս* անձանց համար, որոնք**

- **COVID-19-ի համավարակի հետևանքներով պայմանավորված՝ մնացել են առանց աջակցության, կորցրել են աշխատանքը և չունեն այլ ֆինանսական եկամուտ:**
- **ենթարկվել են խարանի, խտրականության, բռնության և խոշտանգումների, Տվյալ շահառուների համար հասանելի է նաև իրավաբանական խորհրդատվության ծառայություններ: Աջակցության համար անհրաժեշտ է դիմել հետևյալ հղումով:**